



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0280/02/15թ.
Նախագահող դատավոր՝ Ն.Գրիգորյան
Դատավորներ՝ Հ.Աբրահամյան
Կ.Սաղյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ N 0280/02/15թ.

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ք. Ստեփանակերտ

20-ին դեկտեմբերի 2016թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)՝
վճռաբեկության կարգով.

նախագահությամբ՝ դատավոր
դատավորներ՝

Ա.Աբրահամյանի
Վ.Հովսեփյանի
Ի.Կարապետյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի <<Սամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի ընդդեմ <<Վրեժ>> փակ բաժնետիրական ընկերության՝ 30.717.565,42 /երեսուն միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր վաթսուհինգ ամբողջ քառասուններկու հարյուրերորդական/ ՀՀ դրամ բռնագանձելու մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման դեմ <<Սամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Արմեն Խաչատրյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝

Առաջին ատյանի դատարան/ 2015 թվականի հունվարի 12-ի օրինական ուժի մեջ մտած վճռով <<Սամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ նաև Ընկերություն/ ճանաչվել է սնանկ և Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել անհատ ձեռնարկատեր Ա.Խաչատրյանը:

2015 թվականի փետրվարի 26-ին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը /այսուհետ՝ նաև Հայցվոր/ հայց է հարուցել Առաջին ատյանի դատարան ընդդեմ <<Վրեժ>> փակ բաժնետիրական ընկերության /այսուհետ՝ նաև Պատասխանող/՝ 30.717.565,42 ՀՀ դրամ բռնագանձելու պահանջի մասին:

Առաջին ատյանի դատարանի 2015թ. ապրիլի 11-ի վճռով գործի վարույթը կարճվել է՝ նույն դատարանի 2015թ. մարտի 11-ի որոշմամբ Ընկերության լուծարման պատճառաբանությամբ:

Հայցվորի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ԼՂՀ վերաքննիչ դատարանի /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2015թ. հունիսի 3-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի 2015թ. ապրիլի 11-ի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. հունիսի 30-ի վճռով հայցը բավարարվել է: Պատասխանողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2016թ. փետրվարի 19-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանվել և գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

Առաջին ատյանի դատարանի 2016թ. հունիսի 30-ի վճռով հայցը բավարարվել է մասնակիորեն՝ 25.302.934,42 /քսանհինգ միլիոն երեք հարյուր երկու հազար ինը հարյուր երեսունչորս ամբողջ քառասուներկու հարյուրերորդական/ ՀՀ դրամի չափով:

Պատասխանողի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշմամբ Առաջին ատյանի դատարանի վճիռը բեկանվել ու փոփոխվել է և Ընկերության սնանկության գործով կառավարչի հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ 2016թ. հոկտեմբերի 14-ին վճռաբեկ բողոք է ներկայացրել Ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը: Գերագույն դատարանի 2016թ. նոյեմբերի 4-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձվել է որոշմամբ նշված սխալները վերացնելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանելով 20-օրյա ժամկետ՝ որոշումը ստանալու պահից:

2016թ. նոյեմբերի 16-ին Ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը կրկին վճռաբեկ բողոք է ներկայացրել Գերագույն դատարան:

Գերագույն դատարանի 2016թ. նոյեմբերի 24-ի որոշմամբ վճռաբեկ բողոքն ընդունվել է վարույթ:

Վճռաբեկ բողոքի պատասխան է ներկայացրել Պատասխանողի ներկայացուցիչ Ն.Հակոբյանը:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Բողոքը բերվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի խախտման հիմքով:

Ըստ բողոքաբերի՝ Վերաքննիչ դատարանը ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի փոխարեն, անհիմն կիրառել է նույն օրենսգրքի 332-րդ հոդվածի պահանջները և ի խախտումն ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի պահանջների, «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված դրույթները բողոքարկվող գործով վերաբերելի չի համարել՝ ներկայացված հաշվետվությունները հանելով ապացույցների կազմից:

Վերաքննիչ դատարանը, գտնելով, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասին հարկային մարմիններին տրված տեղեկանքն իրենից ներկայացնում է ընդամենը հարկ վճարողի՝ «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածով սահմանված պարտականության կատարում, և չի կարող վկայել Պատասխանողի կողմից 30.12.2011թ. թիվ 057 հաշիվ-ապրանքագրով Հայցվորի նկատմամբ ունեցած պարտքի ճանաչումը վկայող գործողությունների կատարման մասին, ինչպես նաև այդ հաշվետվությունները չեն ներառում գործով քննարկման առարկա 30.12.2011թ. թիվ 057 հաշիվ-ապրանքագրով կատարված առուվաճառքի գնի չափով գումարի վերաբերյալ կոնկրետ տվյալներ, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի համաձայն՝ այդ հաշվետվությունները հանել է ապացույցների կազմից:

Մինչդեռ, համաձայն «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ հարկ վճարողը պարտավոր է սահմանված ժամկետներում հարկային մարմիններին ներկայացնել հարկային օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, հաշվարկները, այլ փաստաթղթեր և տեղեկություններ, սակայն թե ինչպիսի տեղեկություններ պետք է ներկայացնել, հարկ վճարողը ինքն է որոշում՝ ելնելով իր ձեռնարկատիրական գործունեությունից և կնքած գործարքներից: Այն հանգամանքը, որ Պատասխանողը 2013-2015թթ. դեբիտորական և կրեդիտորական պարտքերի համաձայն՝ ներառել է «Սամար» ՍՊԸ-ի հանդեպ կրեդիտորական պարտավորություն, նշանակում է, որ նրանց միջև կնքվել է գործարք, որից էլ առաջացել է վճարման պարտավորություն: Եվ ներկայացնելով դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասին տեղեկանք՝ Պատասխանողը յուրաքանչյուր անգամ փաստել է իր պարտքը «Սամար» ՍՊԸ-ի հանդեպ, այսինքն՝ նշված տեղեկանքների ներկայացումն իրենից ներկայացնում է պարտքի ճանաչմանն ուղղված գործողություն:

Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 340-րդ հոդվածի՝ պարտքի ճանաչմանն ուղղված գործողությունը ենթադրում է, որ

<<1. Հայցային վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է սահմանված կարգով հայցը հարուցելով, ինչպես նաև պարտավոր անձի կողմից պարտքի ճանաչումը վկայող գործողությունները կատարելով:

2. Ընդհատումից հետո հայցային վաղեմության ժամկետի ընթացքը նորից է սկսվում: Մինչև ընդհատումն անցած ժամանակը չի հաշվվում նոր ժամկետի մեջ:>>

Այսինքն՝ Վերաքննիչ դատարանը պետք էր ընդհատված համարեր հայցային վաղեմության ընթացքը, այլ ոչ թե հայցային վաղեմության ժամկետը համարեր անցած և պետք է պարզաբաներ, թե ինչն է հանդիսանում պարտքի ճանաչումը վկայող գործողություն, և այդ պարզաբանումների լույսի ներքո բացառեր դրա ճանաչումը:

Իսկ այն հանգամանքը, որ թիվ ԸԻԴ 2077/02/12թ. քաղաքացիական գործով Գերագույն դատարանը 25.06.2013թ. կայացված որոշման մեջ փաստել է, որ «ստացական կամ այլ փաստաթուղթ տալը պարտավոր անձի կողմից պարտքի

ճանաչումը վկայող գործողություն է...>>, միայն կարող է վկայել, որ դեբիտորական և կրեդիտորական պարտքերի մասին տեղեկանքը նույնպես փաստաթուղթ է և պարտքի ճանաչումը վկայող գործողություն:

Հաշվի առնելով, որ կողմերի միջև գործարքը կնքվել էր 30.12.2011թ. թիվ 057 հաշիվ-ապրանքագրով, այլ ոչ թե առուվաճառքի պայմանագրի բոլոր դրույթները ներառող փաստաթղթի միջոցով, որտեղ հստակ սահմանված կլինեք ստացված ապրանքի դիմաց վճարման պարտավորության կատարման ժամկետը, ապա պետք է առաջնորդվել առուվաճառքի պայմանագրի և պարտավորությունների կատարման ընդհանուր դրույթներով, մասնավորապես ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 502-րդ հոդվածի 1-ին մասի, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի և <<Կազմակերպությունների, բացառությամբ բանկերի դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի պահուստաֆոնդի ձևավորման դեբիտորական և կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման դուրսգրման կարգը հաստատելու մասին>> ԼՂՀ կառավարության 2003թ. հուլիսի 8-ի թիվ 205 որոշման դրույթներով:

Նման պայմաններում, 30.12.11թ. թիվ 057 հաշիվ-ապրանքագրով վճարման պարտավորության կատարման ժամկետն անցած պետք է համարել 29.02.12թ. սկսած և հայցային վաղեմության ժամկետի սկիզբը պետք է ընդունել այդ օրվանից:

Վերոշարադրյալի հիման վրա բողոքաբերը խնդրել է Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշումը բեկանել և գործն ուղարկել Առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

3. Վճռաբեկ բողոքի պատասխանի փաստարկները.

Վճռաբեկ բողոքի պատասխանում նշվել է, որ բողոքարկվող գործով Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշումն օրինական է, հիմնավորված և ելնում է արդարադատության բոլոր պահանջներից: Վճռաբեկ բողոքի պատասխանի հեղինակը խնդրել է Հայցվորի վճռաբեկ բողոքը մերժել՝ Վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

4. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. 02 Ա 001392 իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի համաձայն՝ <<Սամար>> պատասխանատվությամբ ընկերությունը ԼՂՀ պետական ռեզիստրի իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում գրանցվել է 2006թ. մայիսի 3-ին:

2. Առաջին ատյանի դատարանի 12.01.2015թ. օրինական ուժի մեջ մտած վճռով Ընկերությունը ճանաչվել է սնանկ:

3. Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել անհատ ձեռնարկատեր Ա.Խաչատրյանը:

4. 2011թ. դեկտեմբերի 30-ին Պատասխանողը թիվ 057 հաշիվ-ապրանքագրով

ընկերությունից գնել է 22.591.906,42 /քսաներկու միլիոն հինգ հարյուր իննսունմեկ հազար ինը հարյուր վեց ամբողջ քառասուներկու հարյուրերորդական/ ՀՀ դրամ գումարի չափով տարբեր տեսակի գործիքներ:

5. 2015թ. ապրիլի 8-ի դատական նիստում Պատասխանողի ներկայացուցիչ Ժ.Արզումանյանը գրավոր միջնորդել է Առաջին ատյանի դատարանին՝ կիրառել հայցային վաղեմություն և մերժել հայցապահանջը:

6. Ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանը 2015թ. փետրվարի 16-ին փոստային առաքմամբ գրավոր պահանջ է հղել Պատասխանողին՝ տասնօրյա ժամկետում Ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունները կատարելու համար:

5. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Գերագույն դատարանն արձանագրում է, որ բողոքարկված դատական ակտը վճարել վերանայման ենթարկելը բխում է օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործառնությունից և գտնում, որ սույն գործով արտահայտած իրավական դիրքորոշումները կարևոր նշանակություն ունեն նմանատիպ գործերով միասնական դատական պրակտիկա ձևավորելու համար:

Սույն բողոքի քննության շրջանակներում Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ կողմերի միջև ծագած պարտավորությունների բնույթին և դրանից բխող հայցային վաղեմության ժամկետի ընթացքի հաշվարկման կարգին:

ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի /այսուհետ՝ Օրենսգրք/ 521-րդ հոդվածի համաձայն՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող մատակարար-վաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները պայմանավորված ժամկետում /ժամկետներում/ հանձնել գնորդին՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ անձնական, ընտանեկան, տնային կամ այլ նմանօրինակ օգտագործման հետ չկապված նպատակներով օգտագործելու համար: Մատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր:

Գործի նյութերով հաստատված է, որ «Սամար» ՍՊԸ-ն 2011 թվականի դեկտեմբերի 30-ին «Վրեժ» ՓԲԸ-ին է հանձնել թիվ 057 հաշիվ ապրանքագրում նշված ապրանքները, որոնց գինը կազմում է 22.591.906.42 ՀՀ դրամ: Պատասխանողի կողմից փաստացի ընդունված ապրանքների համար վճարելու որևէ ժամկետ չի նշվել:

Նման պայմաններում, Առաջին ատյանի դատարանը ճիշտ է համարել, որ կողմերի միջև գրավոր կնքվել է Օրենսգրքի 521-րդ հոդվածի դրույթներին համապատասխան մատակարարման պայմանագիր:

Ի տարբերություն առուվաճառքի պայմանագրի, որի դեպքում դրամական միջոցների վճարումը կատարվում է պայմանագրի կնքման պահին, մատակարարման պայմանագրի դեպքում օրենսդիրը վճարման որևէ ժամկետ չի սահմանել: Այդ առումով, մատակարարման պայմանագրի և նրա իրական կատարման ժամկետները չեն համընկնում:

Օրենսգրքի 521-րդ հոդվածից նկատելի է, որ մատակարարման պայմանագիրն իր մեջ ներառում է նաև առուվաճառքի պայմանագրին բնորոշ տարբեր, ուստի սույն վեճի կարգավորման հարցում կիրառելի են նաև Օրենսգրքի 352-րդ, 470-րդ, 502-րդ և 503-րդ հոդվածների պահանջները:

Այսպես, Օրենսգրքի 352-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ այն

դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության կատարումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորություն պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

Օրենսգրքի 470-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առուվաճառքի մասին դրույթները կիրառվում են առուվաճառքի պայմանագրի առանձին տեսակների /...ապրանքների մատակարարում.../ նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրի այդ տեսակների նկատմամբ նույն օրենսգրքի կանոններով:

Առաջին ատյանի դատարանը, վերլուծության ենթարկելով վերոնշյալ հոդվածների դրույթները և հիմք ընդունելով, որ Ընկերության սնանկության գործով կառավարիչը 2015թ. փետրվարի 16-ին փոստային առաքմամբ գրավոր պահանջ է հղել Պատասխանողին՝ տասնօրյա ժամկետում Ընկերության նկատմամբ ունեցած պարտավորությունները կատարելու համար, պարտավորության կատարման ժամկետի սկիզբը համարել է 2015թ. փետրվարի 27-ը:

Վերաքննիչ դատարանը, չհամաձայնվելով Առաջին ատյանի դատարանի նման դիրքորոշման հետ, իր որոշման մեջ արձանագրել է, որ «Հայցվորը 2011թ. դեկտեմբերի 31-ից իմացել է կամ պետք է իմացած լիներ 30.12.2011թ. թիվ 057 հաշիվ-ապրանքագրով վաճառված ապրանքի գինը Պատասխանողի կողմից չվճարելու պատճառով իր իրավունքի խախտման մասին»:

Գերագույն դատարանը, հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկզբնական պահի վերաբերյալ ստորադաս դատարանների դիրքորոշումների լույսի ներքո օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու նպատակով արձանագրում է հետևյալը.

Հայցվորի և Պատասխանողի միջև կնքված մատակարարման պայմանագիրը չի նախատեսում դրա կատարման ժամկետ և չի պարունակում ժամկետի որոշման պայմաններ: Տվյալ դեպքում Պատասխանողի կողմից պարտքի փոխանցումը պետք է կատարվեր պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում, ինչը չի կատարվել:

Համաձայն ԼՂՀ կառավարության 2003թ. հուլիսի 8-ի թիվ 205 որոշմամբ հաստատված՝ Կազմակերպությունների /բացառությամբ բանկերի/ դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի /պահուստաֆոնդի/ ձևավորման, դեբիտորական ու կրեդիտորական պարտքերի անհուսալի ճանաչման և դուրսգրման կարգի 2-րդ կետի՝ հաստատված կարգը տարածվում է շահութահարկ վճարող հանդիսացող կազմակերպությունների նկատմամբ /բացառությամբ բանկերի/ այլ անձանց հետ պայմանագրերից, աշխատանքային հարաբերությունները կարգավորող օրենսդրությունից, վնաս պատճառելու հետևանքով կամ օրենքով նախատեսված այլ հիմքերով առաջացած պարտականությունների /այսուհետ՝ դեբիտորական կամ կրեդիտորական պարտք/ վրա:

Նույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ այն դեպքում, երբ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետը փոխադարձ համաձայնությամբ

երկարաձգվում է, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքը համարվում է կետանցված նոր ժամկետում չմարվելու դեպքում: Իսկ այն դեպքում, երբ սահմանված չէ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ, ինչպես նաև ցպահանջ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերի դեպքում, դեբիտորական կամ կրեդիտորական պարտքի մարման ժամկետ է համարվում այդ պարտքն առաջացնող գործարքի /գործառնության փաստի/ կատարման օրվան հաջորդող 60-րդ օրը:

Հիմք ընդունելով վերոնշյալը և սույն գործի փաստերը համադրելով՝ Գերագույն դատարանը գտնում է, որ 2011 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 057 հաշիվ ապրանքագրի պարտավորությունների համար հայցային վաղեմության ընդհանուր ժամկետի ընթացքն սկսվում է 2012թ. մարտի 1-ից հետո:

<<Անվճարունակության /սնանկության/ մասին>> ԼՂՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի <<զ>> կետի համաձայն՝ սնանկության գործերով նշանակված կառավարիչը դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջվող հարցերով, ներգրավվում պարտապանի այն դատավարություններում, որտեղ վերջինս հանդես է եկել որպես հայցվոր կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող 3-րդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից:

Համաձայն գործի նյութերի՝ Առաջին ատյանի դատարանի 12.01.2015թ. օրինական ուժի մեջ մտած վճռով <<Մամար>> ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ և դատարանի նույն օրվա մեկ այլ որոշմամբ Ընկերության սնանկության գործով կառավարիչ է նշանակվել Արմեն Խաչատրյանը: Վերջինս Պատասխանողից 30.717.565,42 ՀՀ դրամ գումար բռնագանձելու պահանջի մասին հայցադիմումը դատարան է ներկայացրել 2015թ. փետրվարի 26-ին, այսինքն՝ երբ դատարան դիմելու հայցային վաղեմության ընդհանուր ժամկետը դեռևս ավարտված չի եղել: Այդ առումով, Գերագույն դատարանը փաստում է, որ, չնայած Առաջին ատյանի դատարանը հայցային վաղեմության ժամկետի ընթացքի սկիզբը սխալ է որոշել, սակայն կայացրել է ըստ էության ճիշտ ելքով՝ հայցը 25.302.934,42 /քսանհինգ միլիոն երեք հարյուր երկու հազար ինը հարյուր երեսունչորս ամբողջ քառասուներկու հարյուրերորդական/ ՀՀ դրամի չափով բավարարելու մասին դատական ակտ:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը և արձանագրված նյութական իրավունքի նորմերի խախտումները Գերագույն դատարանը դիտում է բավարար՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի ուժով Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

Վերոնշյալ հիմնավորմամբ Գերագույն դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում անհրաժեշտ է կիրառել ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված Գերագույն դատարանի՝ Վերաքննիչ դատարանի դատական ակտը բեկանելու և Առաջին ատյանի դատական ակտին օրինական ուժ տալու լիազորությունը՝ սույն որոշման պատճառաբանություններով:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Հայցվոր <<Սամար>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության սնանկության գործով կառավարիչ Ա.Խաչատրյանի վճարելի բողոքը բավարարել: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2016թ. սեպտեմբերի 15-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2016թ. հունիսի 30-ի վճռին՝ սույն որոշման պատճառաբանություններով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դատական նիստերի դահլիճում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ _____ Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ _____ Վ.ՀՈՎՍԵՓՅԱՆ

_____ Ի.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ